

Լ. ԵՎԼԱՆ ԲԱՐՔՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՍԻՍՏԵՄԸ ՄՈՆՂՈՒԱԿԱՆ
ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Մոնղոլական տիրապետությունը Հայաստանում, մեր կարծիքով, պետք է բաժանել երեք շրջանի: Առաջին շրջանն ընդգրկում է արշավանքներն ու վերջնական նվաճումները, մինչև առաջին աշխարհագիրը՝ 1253—54 թ.թ., երկրորդ շրջանը՝ առաջին աշխարհագրից մինչև Ղազան-Պանի ռեֆորմները 1290-ական թվականները և երրորդ շրջանը Ղազան-Պանի տիրապետության ու հետագա տարիները մինչև Լենկ-Թեմուրի արշավանքները: Այս բաժանումը մենք անում ենք, հիմնված ունենալով տնտեսական կյանքում կատարված որոշ փոփոխություններ, որոնք սակայն ներկայիս հասկացողության մեջ, չպետք է ընդունել որպես հեղաշրջիչ մոմենտներ՝ իրենց լայն բովանդակությամբ:

Նվաճողների քաղաքականությունը, նրանց տիրապետության ամբողջ ժամանակաշրջանում, քաղաքական կյանքի ասպարեղում ընդհանրապես անփոփոխ է մնացել, բացառությամբ նվաճումների ու արշավանքների շրջանից, ուստի մոնղոլական տիրապետության ժամանակամիջոցը երեք շրջանների բաժանելը կատարված է տնտեսական կյանքում տեղի ունեցած փոփոխությունների հիման վրա:

Արշավանքներն ու ասպատակությունները, որոնք հիմնականում կատարվում էին կողոպուտի ու ավարի նպատակով, ընդհանրապես տևեցին մոտ քառորդ դար: Մոնղոլ նվաճողների համար եկամուտի նախկին այդ աղբյուրները՝ ավարը, կողոպուտը, չէին կարող մի մեծ պետության ֆինանսավորման ու տնտեսական ապահովության մշտական աղբյուրը հանդիսանալ: Հիտևապիս և մոնղոլները ստեղծեցին հարկաֆինանսական մի դաժան սիստեմ՝ նվաճված երկրները սիստեմատիկաբար կեղեքելու, նրանց տնտեսական-կենսական հյուծելը քամելու, և մոնղոլական հսկայական պետության համար նյութական անհրաժեշտ բազա ապահովելու նպատակով: Նրանք վարում էին աննախընթաց ծանր հարկային քաղաքականություն:

«Գետության տնտեսական հիմքը կաղմում են հարկերը», ասում է Էնդելսը, խոսելով ընդհանրապես պետության մասին, «պետության գոյությունը տնտեսապես արտահայտված հարկերի մեջ է կայանում»:¹

Մարքսն ասում է.

«Նվաճելով երկիրը, նվաճողների համար ամենամերձավոր խնդիրը միշտ էլ եղել է յուրացումը և մարդիկ»:²

Մոնղոլական խաների, խանորդիների, նրանց կանանց, հոգևորականությանը, բանակին, Մարքսի խոսքերով՝ «հեթաթային այդ բոլոր արա-

¹ К. Маркс и Ф. Энгельс — Сочинения, т. 5, стр. 215.

² К. Маркс — «Капитал», т. III, гл. 47, стр. 698, в примечании.

րածներին»¹ պահելու համար անհրաժեշտ էին նյութական միջոցներ և այդ միջոցները նրանք տեսնում էին նվաճված երկրների ու ժողովուրդների տնտեսական շահագործման մեջ, իրենց տնտեսական քաղաքականութեան մեջ — բաղմամբով ու բաղձառեցակ հարկերի ու տուրքերի գանձման մեջ:

Մոնղոլները գանձում էին ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի հարկեր: Ուղղակի հարկերն էին հողահարկը, գլխահարկը, գույքային հարկը, անասնահարկը և այլն: Լեռներ կապիտալիստական հասարակարգի մասին խոսելիս, ուղղակի հարկերը համարում է հարկերի հնագույն ձևը:²

«Անուղղակի հարկերը, — գրում է Լենինը, — համարվում էին այնպիսի հարկեր, որոնք ուղղակի չեն վերցվում հողից կամ տնտեսութունից, այլ ժողովրդի կողմից վճարվում էին անուղղակի ձևով...»

Անուղղակի հարկերը Լենինը համարում է «ամենաանարդարացի հարկերը»:³ Մոնղոլական էպոխայի հարկերի տեսակների կոնկրետ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նվաճված ժողովրդից գանձվող անուղղակի հարկերը մի քանի անգամ գերազանցել են ուղղակի հարկերին, և որ իսկապես նրանք իշխողների համար հանդիսացել են կեղեքման ու չարաշահումների աղբյուր, ամենաանտանելի և ամենադաժան միջոցներով:

Հարկերի կլասիֆիկացիան, ըստ հարկադրման սկզբունքի, եղել է համեմատական պրոգրեսիվ և ռեգրեսիվ: 1. Համեմատական է հարկադրումը այն դեպքում, երբ բոլոր եկամուտների վրա սահմանվում է հարկի միասնական չափի դրույք: 2. Պրոգրեսիվ հարկադրման դեպքում եկամուտների աճմանը զուգընթաց աճում է նաև հարկային գանձումների տոկոսը (այս պրոգրեսը կարող է լինել բարդ և պարզ): 3. Ռեգրեսիվ հարկադրման դեպքում հարկերը մեծ տոկոսով ընկնում են նվազ եկամուտների վրա:

Մոնղոլները Հայաստանում, ինչպես և ամենուրեք կիրառել են համեմատական ռեգրեսիվ հարկադրման սկզբունքը: Թերևս այդ դրույթունը մի փոքր փոխվում է Ղազան-խանի տիրապետության շրջանում (1295—1304): Կարելի է ենթադրել, թե այս ժամանակ կիրառվել է համեմատական հարկադրման և որոշ չափով պրոգրեսիվ հարկադրման սկզբունքը (վերջինս իր պարզ ձևով): Մինչև Ղազան-խանի ռեֆորմները, նվաճված երկրներում չկար միասնական հարկադրման չափ, ընդհանրապես բացակայում էր միասնական չափ ու կշռի հասկացությունը: Պետություն տարբեր շրջաններում գոյություն ունեին չափ ու կշռի տարբեր միավորներ, որ լայն ասպարեղ էր բացում մոնղոլական պաշտոնեության կամայականությունների ու չարաշահումների համար: Ղազան-խանի մտցրած մի շարք բարենորոգումները, պետության մեջ միասնական չափի ու կշռի միավորի, հարկադրման միասնական չափի դրույքի հաստատման, հարկահավաքման կայուն ժամկետների և այլնի մասին, երկար չտևեցին: Փաստերը ցույց են տալիս, որ նրա հաջորդները երկու տասնյակ տարի անց, ստիպված են լինում զբաղվելու նույն հարցերով, ինչպես օրինակ, Աբու Սաիդ խանը 1316—1332 թթ.: Մոնղոլական իշխանության հարկային ամբողջ քաղաքականությունը հիմնված էր կենտրոնական իշխանու-

¹ К. Маркс и Ф. Энгельс — Сочинения. т. 5, стр. 215.

² В. Ленин — Сочинения, т. 5, стр. 294.

³ Նույն տեղում, стр. 295.

⁴ Նույն տեղում, стр. 294.

թյան կողմից կատարվող աշխարհագրերի վրա: Պետք է նկատենք, որ նվաճված երկրներում նրանց տնտեսական քաղաքականությունը հիմնականում արտահայտվել է աշխարհագրերի կատարումով, որի մասին ժամանակակիցները գտնում էին, որ կսկիծով են խոսում:

Մեր պատմագրության մեջ պահպանված տեղեկությունները վերաբերում են միայն 1253—54 թվին կատարված աշխարհագրին: Սակայն Ղազան-Քանի ռեֆորմների բնույթն ու էությունը նկատի ունենալով, ենթադրում ենք, որ նրա ժամանակ էլ պետք է որ աշխարհագիր կատարված լինի, որի մասին հայ պատմագրությունը ուղղակի տեղեկություններ չի պահպանել: Հիմնվելով Մխիթար Այրիվանցու այն վկայության վրա, թե «Արդուն կրկին համարեաց զաշխարհս», կտրելի է ենթադրել, որ մասնակի աշխարհագրեր առանձին երկրներում և շրջաններում նույնպես կատարվել են: Թուսաստանում այն երկու անգամ է կատարվել՝ 1236 և 1257 թվերին: Մեր պատմության մեջ առաջին աշխարհագրի մասին տարբեր վկայություններ կան:² Հստակ վարդան Արևելցու այն կատարվել է 1253 թվին, իսկ ըստ Ստեփաննոս Օրբելյանի և Կիրակոս Գանձակեցու՝ 1254 թվին: Մեզ թվում է, որ մեր պատմիչների մոտ տարբերվել են վերաբերող այդ տարբերության պատճառը հետևյալն է. աշխարհագրի անցկացման պրոցեսը Անդրկովկասում տևել է երկու տարի, 1253 թվին այն կատարվել է Վրաստանում, հետևապես նաև Հայաստանի որոշ գավառներում և Աղբյուրի հյուսիս-արևելյան շրջաններում: Վարդան Արևելցին գուցե տալիս է այս թվականը: Իսկ Ստեփաննոս Օրբելյանը և Կիրակոս Գանձակեցին տվել են Հայաստանի կենտրոնական և հարավային շրջաններում կատարված աշխարհագրի թվականը:

Նվաճողներն առաջին աշխարհագրից հետո ամենուրեք հարկադրված ու հարկահավաքման բավականին մշակված սխեմով մտցրին: Սակայն հարկադրված օրենքի սկզբունքը տարբեր երկրներում՝ տարբեր միավորներով էր արտահայտվում: Եթե Թուսաստանում հարկադրված միավորը հանդիսանում էր ծուխը, ապա Հայաստանում այդ միավորը անհատն էր՝ գլուխը:

* *

Մոնղոլական պետության սխեմայում գոյություն ունեն երկու դիվան, ինչպես կենտրոնական իշխանության մեջ՝ մեծ խանի մոտ, նույնպես և հետագայում ստեղծված անկախ պետություններում, կառավարման դիվան և լենների—ավատների դիվան: Ուշագրավ է այն հանգամանքը, որ պատմագրությունը ավելի շատ պահպանել է ոչ այնքան մոնղոլական տիրապետության շրջանի հիմնարկների անունները, որքան հիմնարկները ղեկավարողներին—սահիրներին, անունները:

«Արևելքում գործերը որոշում էր ոչ այնքան դիվանը, ծառայող

¹ Մխիթար Այրիվանցի—«Պատմութիւն հայոց», Մակվա, 1860 թ., էջ 68:

² Վարդան Քաղաքբեղի—«Պատմութիւն տիեզերական», Մոսկվա, 1861, էջ 193, Ստեփաննոս Օրբելյան—«Պատմութիւն նահանգին Սխական», Թիֆլիս, 1911 թ., էջ 412—413, Կիրակոս Գանձակեցի—«Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1910 թ., էջ 348—352, Մխիթար Այրիվանցի, էջ 67 և այլն:

փոքրիկ քարտուղարներից (զրազրերի-գիթարչի) կազմված հլու օթ-
զանը, որքան պետք—սահիրը—պետական քարտուղարը»¹

Սահիրներ—պետական քարտուղարներ նշանակվում էին նաև տեղա-
կան տիրող իշխանների մոտ:

«... (նեվ) հույժ մեծարեցաւ Սաղունը Ղ'աննի կողմից, և ի խնամա-
կալություն ստացավ Թելալն ու Բելաքանն և բազում յերկրներ, և
Սաղունը բարվոք վարում էր Վրաստանի գործերը... Յեւ Ավագ աթա-
բակի մեծ Ս(ահ)իր—գիւանը սրա (Դեմետրի) մօտ էր»²

«Եւ տայ զղուստը նորա գնոջաքն ի կնութիւն մեծ խօջային Սա-
հիր գիւանին, որ ունէր ի բռին զամենայն աշխարհս տէրութեան Ա-
պաղայ զանին, որ ասի լինել ըստ մեծի դաւթարի դիւանին համարս
150 դումանի, եւ մի գումանն մի բիւր է եւ նա էր դիւանի գլուխ եւ
վերակացու ամենայնին»³

Բնական է, որ լինելի սիստեմով կառավարվող պետութեան մեջ հո-
ղերի վարչատնտեսական հաշվառումը պիտի հանդիսանար այդ պետութեան
համար առաջնակարգ խնդիր: Սա ֆեոդալին հնարավորություն էր տալիս
ապահովելու նստուրալ, դրամական և զինվորական պարտավորությունները:

Հարկերի կանոնավոր ձևով գանձման համար հարկավոր էր կազմա-
կերպել հաշվառում: Մեծ, զիվանում կենտրոնացված էին բնակչության, ա-
նասունների և հողագործության վերաբերյալ վիճակագրական տվյալներ:
Մոնղոլական տիրապետության շրջանում պետական պաշտոնեությունը ցան-
ցը բավականին ընդարձակ էր և բազմատեսակ: Այդ պաշտոնեությունը
հանդիսանում էր նվաճողների ամբողջ վարչատնտեսական քաղաքականու-
թյան մարմնացումը: Կենտրոնական իշխանությունը ղեկավարվելով իր շա-
հերով, հետևյալ քաղաքականություն էր վարում: Աչքի առաջ ունենալով
(տվյալ ղեկավար խոսքը վերաբերում է Հայաստանին) հայ-պարսկական և
հայ-սելջուկ-արաբական թշնամական հարաբերությունները և կրոնական
տարբեր դավանանքները, պետական գրեթե բոլոր պաշտոնյաները գործում
էին պարսիկների և սելջուկ-արաբների (որոնց մեր մատենագիրները ընդ-
հանուր անունով անվանում են տաճիկներ) միջոցով և նրանց աջակցու-
թյամբ:

«Նմանապէս եւ այս Բուղա եկեալ ի դօրսն Թաթար, մտանէր ի
տունսն աւագանւոյն, եւ զոր ինչ ախորժ թուէր իւրն՝ առնոյր ան-
խնայ, և ոչ ոք իշխէր ասել ինչ նմա. զի ժողովեալ էր իւր արս
սրիկայս ի Պարսից և ի Տաճկաց, որք անխնայ գործէին զգործ խա-
կութեան, և թշնամիք էին առաւել քրիստոնէից...»⁴

«Դանդի Պարսիկ Տաճկահաւատք սպասաւորօք շրջէին»⁵

¹ Դիվանի գլուխ կանգնած պետը սամանիդների մոտ կոչվում էր սահիր—տեր—պետ—
աթարեկ. Гордлевский—«Государство сельджукидов Малой Азии», Москва-Ленин-
град, 1941 г., стр. 139—140.

² Լ. Մելիքսեթ-Բեկ—«Վրաց ազդեցությունը Հայաստանի և հայերի մասին», հատոր
Բ., Երևան, 1936, էջ 60, ահա և Սրբելեան, էջ 426, Ղեվոնդ Ալիբաթ—«Շիրակ», Վենետիկ, Ս.
Ղազար, 1881 թ., էջ 62—63, «Այրարատ», Վենետիկ, Ս. Ղազար, 1890, էջ 274, Ֆրիդ—«Բա-
նաստեգծություններ», Երևան, 1941 թ., էջ 219 և այլն:

³ Սեփյուցու Սրբելեան, էջ 418—419.

⁴ Կիրակոս Գանձակեցի, էջ 297.

⁵ Նույն տեղում, էջ 349.

«Արք Պարսիկք էին՝ ծարաւի արեան քրիստոնէից, նոքա առաւել կեղեքէին ղկեանս մեր ամենայն տառապանօք»¹

Կիրակոս Գանձակեցին պատմում է, որ երբ Բուղան կասկածում է Ավաղ Զաքարյանի վրա (ապստամբութեանը մասնակից լինելու մեջ), գործով զալիս է Ավաղի մոտ և նրա հարցին՝ «Ձինչ է այդ բազմութիւն ղօրաց. միթէ ապստամբ իցես ի ղանէն, և եկիր սպանանել ղմեզ», Ավաղը պատասխանում է. «Եւ ղու ընդէ՞ր ժողովեցեր զբազմութիւն արանց չարադործաց Պարսից, եւ եկիր նենդիւ ըմբռնել զմեզ»² և այլն:

Հազանի թան դառնալու ժամանակ, ըստ Ռաշիդ-Ադ-Դինի վկայութիւնների, երկրի քայքայման պատճառը եղել են ոչ այնքան հարկերը, որքան նրանց գանձման ձևերը և ամեն տեսակի երաշխիքի բացակայութիւնը, որ բնակչութեան կողմից վճարված դուժարները նույն այդ վճարողներին երկրորդ, երրորդ անգամ չեն գանձվի: Հաճախ գանձված հարկերը պահվում էին տեղերում և պետական գանձարան չէին ուղարկվում, որի հետևանքով կենտրոնական իշխանութիւնը տվյալ շրջանը դրանցում էր դեռևս հարկեր չղանձած շրջանների շարքը: Դանձարանը մոծվելիք գրաձեռքի համար տրվում էր հատկացադիր (ассигновка) համապատասխան գուժարներ ստանալու պայմանով: Իրականում չկատարված այդ հատկացումների վճարման պատրվակի տակ բնակչութիւնից նորից գանձվում էր դրամ: Նվաճված երկրների հողագործ բնակչութեան դրութիւնը չափազանց ծանր էր: Ռաշիդ-Ադ-Դինը այս մասին հետևյալն է պատմում.

«Մի մարդ «բերատ» ստացավ (հրաման--իրավունք գյուղից հասույթ գանձելու) և գինված. խմբի ուղեկցութեամբ գյուղ գալով, այն դատարկ գտավ, միայն մի հրապարակում կային մարդիկ: Բերատ ուսեցողը մոտենալով՝ հետևյալ պատկերը տեսավ. աթոռի վրա նստել էր մի մարդ, որն այդ նույն գյուղի համար նույնպիսի բերատ էր ստացել, ինչպիսին ինքն էր ստացել: Նստած մարդու շուրջը կանգնած էին ղինված մոնղոլները, իսկ նրանց առաջ կախված էին երեք գյուղացիք՝ ոտքերից, գլուխները դեպի ցած, որոնց անողորմաբար փայտերով ծեծում էին, որպեսզի նրանք խոստովանեն, թե ուր է գրնացել գյուղի բնակչութիւնը, որոնցից պետք է հարկեր գանձվէին»:

Այսպիսով՝ փաստերը ցույց են տալիս, որ կիրառվող հարկահավաքման այդ ձևերը իրոք հանդիսացել են նվաճված երկրների տրնտեսական քայքայման ու անկման գլխավոր, թերևս առաջին պատճառը: Մաղաքիա Արեղան՝ նկարագրելով Արղունի կատարած աշխարհագիրը, գրում է.

«... Եւ այսպէս այլ աւերեցին ղաշխարհն արեւելից, ղի ի մի փոքր գեղն Օ (50) մարդ համարէին, կամ Լ (30) ի ժե (15) տարեկանէն ի վերն զամէնն համարէին մինչև Կ (60) տարեկանն, եւ յամէն զլիսոյ որ համարէին Կ (60) սպիտակ առնուին. եւ թէ ոք փախչէր կամ թաքչէր, յորժամ ըմբռնէին՝ կապէին անողորմ ձեռս ի յետս, եւ գալար գաւազանօք ծեծէին մինչ ղի մարմինն ամենայն տրորէր եւ յարենէն շաղախէր, եւ ապա անողորմաբար զկատաղի շներն իւրեանց,

¹ Կիրակոս Գանձակեցի, էջ 234:

² Նույն տեղում, էջ 298:

³ Заходер—«История Восточного средневековья», Москва, 1944 г., стр. 114.

զոր սովորեցուցեալ էին ուտել միս մարդոյ ի սերս թողուն և ուտել տային զտառապեալ եւ զչունեւոր քրիստոնեայսն...»¹

Սամվել Անեցու ժամանակագրությունը շարունակողներին մեկը զըրում է.

«Սա (Նարբանդան)՝ եղեալ խարաճ առնուլ ի քրիստոնէից, և ոմանց ի մորթն կարեսին վասն աղքատութեան...»² Եվ այլն:

Համալլահ Ղազվինին վկայում է, որ մոնղոլա-իբանական բոլոր շըր-թաններին ստացվող հարկային ամբողջ եկամուտների դուժարը (բացի Նորասանից, որը Փինանսական տեսակետից առանձնացված էր Պարսկաստանից), մինչև Ղազան-Նանը կազմում էր 1700 թուման³ (12,750,000 ռուբլի), Ղազան-Նանի ռեֆորմներից հետո այդ գումարը հասավ 2100 թումանի (15,750,000 ռուբլի)⁴:

Ղազվինին միևնույն ժամանակ նշում է, որ իր ժամանակ չէին կարողանում այդ գումարի կիսը հավաքել, քանի որ ժողովուրդը չէր կարողանում հավաքել իր՝ բերքը և զրա պատճառը՝ ներքին անկարգություններն էին և զինվորական ջոկատների հաճախակի ասպատակությունները: Ղազվինու մոտ պահպանվել է Մեծ Հայաստանից գանձվող հարկերի ընդհանուր գումարը, որը կազմում էր 39 թուման (195,000 ռ.)⁵: Ղազվինին ասում է, որովհետև Հայաստանի հյուսիսային շրջանները մտնում էին Վրաստանի վարչական միավորման մեջ, ապա այդ շրջաններից գանձվող հարկերը մտնում էին Վրաստանից գանձվող հարկերի ընդհանուր գումարի մեջ: Սա է պատմագրության մեջ պահպանված այն ուղղակի տվյալը, որը ցույց է տալիս Հայաստանում մոնղոլների կողմից գանձվող հարկերի հավաքական թիվը:

Նորավանքի 1295 թվի վիմական արձանագրության մեջ պահպանված է հետևյալ վկայութայունը.

«...Հալէձորոյ հարկն՝ սահմանեցաք ի տարում վացսուն սպիտակ տայ, այլ ազատ է յամէն հարկաց. այլ ոչ ամիրայ (ոչ պարոն),՝ ոչ ձեռնաւորի ոչ ինչ հաշիւ չկայ հետ Հալէձորոյ ոչ շոր տայ ոչ այլ ոչ ում...»⁶

Այստեղից թերևս կարելի լինի ենթադրել, որ կապալով տրված հար-

¹ Մաղմիա Աբեղա—«Պատմութիւն վասն աղդին նետողաց», ս. Պետերբուրգ, 1870 թ., էջ 22:

² Ծանոթութայունը մերն է.—Լ. Բ.:

³ Սամվել Անեցի—«Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893 թ., էջ 165:

⁴ Թումանը Ղազվինու ժամանակ արժեք 5000 ռուբլի արծաթով, իսկ դինարը՝ 50 կոպեկ:

⁵ Бартольд—«Персидская надпись на стене Анийской Мечети Мануче» С. Петербург, 1911 г., стр. 20.

⁶ Бартольд—«Персидская надпись...» стр. 24, Петрушевский И. П.—«Хамдуллах Казвини как источник по социально-экономической истории Восточного Закавказья», см. Известия Ака. Наук СССР, Отделение общественных наук, 1937 г., № 4, стр. 898.

⁷ Ղաֆաղարյանի մոտ եղած լուսանկարում քարը ընկած է նա հավանական է համարում, որ Շահխաթունյանցի ժամանակ գրված է եղել (ոչ պարոն), որից հետո քարը կարող է ընկած լինել:

⁸ Կ. Ղաֆաղարյան—«Արձանագրութայունների ժողովածու», անտիպ, ստուգված է ըստ լուսանկարի:

կերը կապալառուների կողմից հարկատու շրջաններից հավաքվում էին ամբողջացրած գումարով՝ գանձվող բոլոր տեսակի հարկերի ընդհանուր գումար էր սահմանվում ու գանձվում:

* *

Մոնիթինգի կապալառուները վարչական և հարկահան պաշտոններում ներկայացուցիչները անվանվում էին «շահնա», «մուխթասիր» (մուսայիր), «ամիրա», «ձեռնավոր» և այլն, որոնց մասին պատմագրությունը ուղղակի ցուցումներ չի պահպանել: Հիմնվելով եղած վկայությունների վրա ակադեմ. Մանանդյանը, Գ. Հովսեփյանը և ուրիշները շատ ճիշտ եզրակացություն են հանգել, որ սրանք քաղաքներում, շրջաններում և գյուղերում վարչական պաշտոններում ներկայացուցիչներն էին օժտված հարկահավաքման իրավունքով: Սրանք բնակչությանից իրենց օգտին նույնպես հավաքում էին լրացուցիչ տուրքեր:

Մոնիթինգի ազնվականության, օրեցօր աճող պահանջները և քայքայված դուռներից մեծ եկամուտներ ստանալու անհնարինությունը նրանց ստիպում են իրենց ֆինանսների կարգավորման հենարան դարձնել վաշխառությունը: Կենտրոնական իշխանությունը սխտեմ է դարձնում հարկերը կապալով տալը և այդ սխտեմը լայն կիրառում է գոյություն ունեցող վարչական էպոխայում: Հարկերը կապալով էին տալիս, ինչպես կենտրոնական իշխանությունը կամ իշխանությունը, նույնպես և տեղական իշխողները: Պետական դանձարան մտնող հարկերի դանձումը կապալով տրվում էր առևտրականներին, առևտրական ընկերություններին: Կապալառուն պարտավոր էր պետական գանձարանին սկզբից վճարել կապալով վերցրած որևէ երկրից կամ շրջանից գանձվող հարկի ընդհանուր գումարը: Այս հանգամանքը պարզ է, որ կապալառուին պիտի ստիպեր գործել այնպես, որպեսզի ինքը չաուժի: Հարկահավաքման ժամանակ կապալառուները շրջում էին մոնիթինգի զինված ուժերի ուղեկցությամբ:

Իրենց «աշխատանքի» ընթացքում նրանք կրկնակի, եռակի շահագրգռվածություն էին ցուցաբերում: Այդ իսկ պատճառով հարկերը հավաքում էին ամենադաժան միջոցներով: Նրանց բոլորովին չէր հետաքրքրում այն հանգամանքը, թե այդ հարկատուն մյուս տարի ի վիճակի կլինի վճարելու պահանջվող հարկերը կամ առհասարակ վճարունակ կլինի, երբ ընթերցում հարկի անվան տակ վերցնում էր, ավելի ճիշտ հափշտակում էր այն ամենը, ինչ կարող էր: Պատահական չէ, որ նվաճված երկրներում հարկահավաքումը կատարվում էր բնակչության նկատմամբ արտահայտվող դատաւարություններով, ծաղր ու ծանակով: Համապատասխան Ղազվինին նշում է, որ հարկերի գանձման կապալային այդ սխտեմը օգուտ էր պետությունը և դանձարանին, որովհետև ամբողջ հարկերը նվաճված երկրներից մեծ մասամբ գանձվում էին այդ ճանապարհով՝ միանգամից և պետական գանձարանը ստանում էր որոշ ամբողջական գումար: Կապալային սխտեմը նոր չարաշահումների ասպարեզ հանդիսացավ նվաճողների համար:

Հետևաբար թագավորի կնքած դաշնագրի մեջ շեղվում է.

1 Հերոսի Պատմիչ — Պատմության թաթարացի, Վենետիկ, 1842 թ., էջ 43:

«Եւ հայք աղաւթ լինիցին յամենայն կապալաց եւ յայլոց ծանրութեանց»¹

Պատմագրության մեջ և վիմական՝ արձանագրություններում պահպանված բաղաձայնի վկայություններ ցույց են տալիս, որ այդ կապալանությունները հաճախ հարկից աղատում էին առանձին հարկատուների, նրանց տալով արտոնություններ։ Սա հենց ապացույց է, որ նրանց հավելումն այնքան շատ էր, որ նրանք երբեմն դիմում էին այդպիսի քայլերի։

Ընդհանրապես մոնղոլական պաշտոնեության, մասնավորապես՝ հարկահավաքների կատարած կամայականությունների ու դաժանությունների հետևանքով նվաճված երկրները, այդ շարքում նաև Հայաստանը, ամայանում էին, բերրի հողերը անսլակ, անապատ էին դառնում։ Այդ երկրների հողագործ, նստակյաց ժողովուրդը դանադան պատճառներով պակասել էր։ Ժողովրդի մեծ մասը դիմել էր փախուստի, մնացածները ոչնչով չահաղըրված չէին հողերը մշակելու։ Գնում էին քաղաք՝ սեղանի աշխատանքի կամ մտնում րանակ՝ ծառայության։ Ռմանք էլ մտնում էին եկեղեցու հովանավորության տակ, այն համարելով ավելի ապահով։ Իբն-Բիբին հետևյալ վկայությունն է պահպանել։

«Պետությունը տեսնելով Ախլաթի շրջանի ամայացումը հաշվառում անցկացրեց անհայտ կորածների և սպանվածների»²

Ժողովրդից վերցնում էին անխտիր ամեն ինչ։ Նքավորներից, որոնք չէին կարողանում վճարել պահանջված հարկը վերցնում էին երեսաներին, կանանց կամ իրենց զուգացուցն և հաճախ այդպիսիներին վաճառում ստրկության։

«Եւ որ ոչ կարէր հատուցանել զսակն՝ զմանկունս նոցա առնուին ընդ պարտուցն...»³

Ֆրիկին վերագրվող երրորդ բանաստեղծության մեջ կարդում ենք.

«Բըրի գիմ որդին գըրաւ,

Ուստի ճուղապ գընալուն,

Միթէ թագաւորն երկնից

Նայ բերէ գիմ որդին ի տուն»⁴

Մի ուրիշ տեղ նա գրում է.

«Հանց կրակ դընէ ծընողացն որ

Յաւիտեան երթա մնայ,

Չհայրն ու մայրն կու տանի

Կաթնակեր տղայն տուն մնայ,

Հանց որբէր ետ կու թողա

Որ սար ու ձոր ամէն կուլա,

Ի հիմնէ տուն կու քակէ որ

Այլ իսկի շէն չի մընայ...»⁵

«Ձկին եւ ըղտղայքն առնու գերի

Եւ հանց տանի, որ այլ չթափի»⁶

¹ Горбунский — Государство Сельджукидов Малой Азии*, стр. 94.

² Կիրակոս Գլխակեցի, էջ 349.

³ Ֆրիկ, էջ 40, ծանոթության մեջ։ Ենթադրում ենք, որ 229 էջում նույնպես այս տեսի պարագրի մասին է խոսում։

⁴ Քրիկ, էջ 45 — 46.

⁵ Նույն տեղում, էջ 236.

իրուսական ժողովրդական երգերուս կարդում ենք.

«... У кого денег нет, у того

дитя возьмет,

У кого дитяти нет, у того

жену возьмет,

У кого жены нет, у того

головой возьмет».¹

Հարկադրման և, որ դիտարկենք է, հարկապահանջման ձևերի ստեղծած հետևանքների մասին մեզ պարզ պատկերացում տալիս են մատենագիրները. ահա նրանց վկայություններից մեկը խափնեցիկների մասին.

«...Նեղիալ տեարք նորա յաւերմանէ գաւառին իւրեանց և ի դառն և վերջին աղքատութենէ: Ուրք եկեալ բնակեցան առ մեօք. և սակս չարաւար կարեաց իւրեանց, որ էին պարտական այլազգեաց եւ կամէին գերի վարել, և տագնապէին ի դառն և յանճարին աղքատութեանց...»²

Մատենագրության մեջ այնքան շատ են մոնղոլական էպոսան արտացոլող վկայութիւնները և փաստերը, որ այդ բոլորի մեջբերումը հնարավոր չէ, ուստի բավարարվենք այսքանով: Ասենք միայն, որ տնտեսական քայքայումն և աշխատավորության համար ստեղծված ծանր վիճակը ժողովրդին ստիպում են թողնել հայրենի հողը, հեռանալ հեռավոր երկրներ:³

* *

Արևելյան մատենագիրները, այդ թվում նաև հայկական, վկայում են, որ մոնղոլական տիրապետության շրջանում իմունիտետային ինստիտուտը լայն բնույթ է կրել:

Մոնղոլական օրենսգրքում՝ «Յասախ»-ում հիշվում է թարխանային՝ իմունիտետային ինստիտուտը: Նրանց հիմնական օրենսգրքը հանդիսանում է «Յասան», այսինքն զանազան ժամանակներում գրի առնված Չինգիզ-Քանի բանավոր հրամանները—Մարքսի բնորոշումով՝ «ընդհանուր քաղաքացիական և կրոնական օրենք»:

«Ֆեոդալական իրավունքի այդ ձևը,—գրում է Մարքսը,—առաջ է գալիս բոլոր կիսաքաղաքակիրթ ժողովուրդների մոտ՝ կյանքի ռազմատենչ ձևի հետևանքով»:

Եթե սկզբնական շրջանում թարխանական իմունիտետով օգտվում էին միայն խոշոր ֆեոդալները, ապա ուշ շրջանում այդ իրավունքով օգտվում էին միջին ազնվականութիւնը, նույնիսկ հասարակ ծագում ունեցողները:

¹ Материалы к изучению истории СССР, стр. 67.

² Ստեփաննոս Օրբելեան, էջ 488:

³ Բնակչութիւնը արտագաղթել է հատկապես Արարատյան դաշտից, Երևանից, Բագրևանդից, Վանանդից և այլն: Ամենացայտուն օրինակը Անի քաղաքը. արտագաղթել է:

⁴ Թարխան՝ հարկից ազատ հոնական ազնվական մի տիպոս, որից՝ Թարխանութիւն հարկից ազատութիւն: Արաբական Tarhan—փառավոր, և անվանի ոեխի անուն է... Այսպես են կոչվում այն անձերը, որոնք կատարելապես արտոնյալ են... Մոնղոլական darhan—հարկից ազատ անձ, վրացերենում Թարխանի—ազատ, Թարխնորա—ազատութիւն: Աճառյան, Արմատական բառարան. հ. 2, էջ 1152—1153:

⁵ Архив Маркса—Энгельса., т. 5, стр. 220.

⁶ Там же, т. 5, стр. 220.

Անհավանական ենք համարում պրոֆեսոր Յակուբովսկու այն կարծիքը՝ թե Ոսկե Հորդայում իմունիտետ կարող էին ստանալ նրանք, ովքեր ազատ էին հարկերից, որովհետև այդ իրավունքի էությունը հենց հարկատվությունից ազատվելն էր: Դոյություն ունեւ թարխանության երկու աստիճան. 1. Մեծ թարխաններ, որոնք ազատ էին անձնական կախումից ու հարկերից և 2. Թարխաններ, որոնք անձնական կախման մեջ էին, բայց ազատված հարկատվությունից:

Այս ճանապարհով առաջ էր դալիս մի նոր արտոնյալ դաս՝ բարձր ազնվականությանը հավասար իրավունքներով: Թարխանական իրավունքը շնորհվում էր բոլոր նրանց, ովքեր խոշոր ծառայություններ էին մատուցել մոնղոլներին. նաև այն հպատակներին, որոնք խանին մատուցում էին թանկարժեք նվերներ: Այդ իմունիտետը սկզբնական շրջանում տրվում էր խաների, իսկ ավելի ուշ՝ արքայազուներին և խանական կանանց կողմից: Բնի 1358 թվի արձանագրության մեջ կարդում ենք.

«Աստուածածնայ ծառայ... ազատ ե թարխան արարի ի հարկէ եւ ի ծառայութենէ»:

Ռաշիդ-Ադ-Դինը ասում է, որ Չինգիզի, Օգատա և Կուլուկ խաների ժամանակ մոնղոլական արքայազուները և խանական կանայք հողատերերին, պաշտոնեությունը և առևտրականներին բաշխում էին հատուկ շնորհագրեր—յաուլիկներ (թաթարական հրովարտակ) և փայիզաններ (թզաչափ տախտակ—ոսկուց, արծաթից, չուգունից, փայտից վրան աստծու և խանի անունը դրված),³ որոնք նրանց իրավունք էին տալիս բնակչությունից ստանալու զանազան ծառայություններ և պարհակներ: Այդ շնորհագրերով արտոնվածները իրենց ամբողջ էությունը, ամբողջ ծանրությամբ ընկնում էին գյուղացիության և արհեստավորության վրա: Փայիզանները տրվում էին կատարված ծառայության կամ նվիրաբերած պարգևի չափի համապատասխան:

Սմբատ Օրբելյանը թանկագին գոհարը տանում է Մանգու-Քանին որպես նվեր, և խանը նրան ոսկյա փայիզա է տալիս.

«... Եւ հրամայեաց տալ Սմբատայ զոր ինչ և խնդրեսցէ: Եւ ետուն նմա փայիզայ ոսկի որ էր տախտակ ունելով զանուն Աստուծոյ և զարքայի դրեալ յինքեան. և այս էր մեծագոյն պատիւ նոցա...»:⁴ Մաղաքիան, խոսելով Սմբատ սպարապետի մասին, գրում է.

«... Տուեալ մեծ ի տոլախ եւ փայիզայս ոսկիս...»:

Ռաշիդ-Ադ-Դինը վկայում է.

«Վերջապես Քամուշ աթաբեկը ներկայացավ, հայտնելով հպատակություն, նրան տվեցին փայտյա փայիզա և կարմիր տամդա»:⁵ Հարկ ենք համարում համառոտակի խոսելու նաև մի շարք տեքստեր.

¹ Греков и Якубовский—«Золотая Орда», Ленинград, 1937 г., стр. 82.

² Նախաբուխեմց—«Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացի Արարատայ», հ. 2, էջմիածին, 1852 թ., էջ 183—184.

³ Թաթարական մի փայիզայի նկար, աես Ղ. Ալիշան—«Սխական», էջ 93.

⁴ Ստեփաննոս Օրբելյան, էջ 410—411.

⁵ Մաղաքիա Արեգա, էջ 16.

⁶ Тизенгаузен В. Г.—«Сборник материалов, относящихся к истории Золотой Орды», т. II (извлечения из персидских сочинений), 1941 г., Москва-Ленинград, стр. 32.

ների բովանդակության մասին, որոնք Հայաստանի տնտեսական կյանքում նախաժողովրդական և մոնղոլական շրջանում գոյություն են ունեցել: Այդ արտոնություններ պարունակող տերմիններից շատերը ժառանգություն են մնացել հայ ժողովրդին արաբական և սելջուկյան նվաճողներից և իրենց նշանակությունը չեն կորցրել Հայաստանի տնտեսական կյանքում երկար դարեր: Առաջին և գլխավոր աղբյուրը մեզ համար այդ տեսակետից հանդիսանում է Ստեփաննոս Օրբելյանի Պատմությունը, որի տված տեղեկությունները վերաբերում են մոնղոլների կողմից Հայաստանի նվաճման նախորդող տասնամյակին և ավելի վաղ շրջանին:

Օրբելյանի մոտ հանդիպում են արտոնությունները նշանավորող տերմիններ:

«Եւ երթեալ՝ յանդիման լինի մեծի արքային Պարսից Մահմուտ Սուլտանին, ծանօթանայ նմա և առնու ի նմանէ փարժան՝ և մանշուր՝ վասն տեղւոյն այնմ: Համարձակ բնակէ ի նմա»¹

Փարման իրավունք ունեին տալու ոչ միայն սուլթանը, շահը կամ խանը, այլ և աթաբեկները:

Ստեփաննոս Օրբելյանի մոտ կարդում ենք.

«...Եւ հաստատեալ զնա (Ստեփաննոս եպիսկոպոսը) տուն աթոռոյ եպիսկոպոսութեան՝ առնու փարման և սիգէլ ի մեծ Աթաբէկէն՝ վասն վիճակիս այսր զի ի նմա ժառանգեցցեն ժառանգորդք սուրբ եկեղեցւոյն»²

Այս մի քանի տերմինների բացատրությունը տալիս ենք ըստ Ստեփաննոս Օրբելյանի.

«...Եւ պատուէին զնա (Ստեփաննոսին) տուղրայիւ գրոյ՝ և փարմանաւ և մանշուրաւ զոր մեք սիգէլ՝ կոչեմք...»³ Եւ այլն:

Այս փաստը վկայում է, որ բոլոր նվաճող ժողովուրդները այս ճանապարհով կարողանում էին իրենց համար համախոհներ շահել նվաճված ժողովուրդների իշխող դասակարգի և հոգևորականության շարքերում, վերջիններիս դարձնելով գործիք՝ ապահովելու համար իրենց տիրապետությունը նվաճված երկրներում:

Մեր ձեռքի տակ եղած աղբյուրների ուսումնասիրությունը բերում է

¹ Հովհաննավանքի եպիսկոպոս Հովհաննեսը—Ստեփաննոս Օրբելյան, էջ 347:

² Փարման—Ֆիրման—հրաման, հրամանագիր, արքայական հրովարտակ, նորագյուտ բառ, պարսկական farman—հրաման: Աճառյաճ, «Արմատական բառարան», հատ. 2-րդ, էջ 1162:

³ Մանշուր—հրովարտակ, արաբական manšūr—հրովարտակ, Աճառյաճ, նույն տեղում հատ. 5, էջ 823:

⁴ Ստեփաննոս Օրբելյան, էջ 348:

⁵ Եպիսկոպոս—Ստեփաննոս Օրբելյան, էջ 351:

⁶ Նույն տեղում:

⁷ Թուրքական արքունի նշանագիր, գինանշան—թուրքական tugra, գավառական tura—թաթարական tugri—Սուլթանի փակագիր ստորագրությունը: Աճառյաճ, «Արմատական բառարան», հատ. 7-րդ, էջ 972: «Սուլթանական փաստաթղթերը, նվիրատվությունների հրովարտականները, ակտերը, պայմանագրերը վավերացվում էր կնիքով тугрой, կնիքի դրամով: Կնիքը վերջին գլխավոր կապան էր դրվանում, փաստաթղթի ձեռագրված համարը Гордлевский (վերջին նշված աշխատության մեջ), стр. 139:

⁸ Սիգիլ—հրաման, կնիք, լատիներեն—sigillum—կնիք, հունարեն sigillon—կայսերական հրամանագիր, Աճառյաճ, հատ. 7-րդ, էջ 220:

⁹ Ստեփաննոս Օրբելյան, էջ 348:

այն համոզման, որ մոնոլիտիկան էպոխայում Հայաստանում գանձվում էին բազմաթիվ հարկեր, որոնցից հաջողվեց պարզել միայն հեռակալները. հողային հարկ, գլխահարկ, անասնահարկ, գույքային հարկ, քաղաքային հարկ, մաքս, պաշարեղենի հարկ, արոտաանեղիների հարկ, բանակի պահպանման հարկ, զինվորական հարկ, կոռու բեզար և այլն: Մի խոսքով այն ամենը, ինչ հնարավոր էր, հաճախ նույնիսկ անհնար էր հարկման՝ հարկադրում էին, որը և կազմում էր հարկի կամ տուրքի առանձին տեսակ: